26. ՔՅԱԶԼԻԿ

Կէղի, չէղի թագավոր մի ու մեկ հատիկ ախչիկ։ Շատ հարստութան տեր կէղի։ Շատ լէ էդ ախչիկ կսիրեն, թե հերը, թե մերը ըսկի չթողին օր էդ ախչիկ օր ու արև ելնի։

Էդ ախչկա տասնխինգ տարին կթըմըմի. օրերուց մեկ, մեկ դզեզ (բզեզ) կէրթա էդ ախչկա պինչ։ Էդ ախչիկ կծռի, խելք կթռու, էստեխ ու էնտեխ կզարկա զինք։

Թագավորն ա կասա.— Է՛, աստված, ինչպե՞ս էնենք. մենք ինք, աշխարքի մեջ՝ իտա ախչիկ, էն լէ ծռավ. ուրեմ ուրիշներ կլսեն ու մըզի շատ ամոթ ա։

Կիգա ուրան կնկան կասա.— Կնիկ, մենք մեր ախչիկ իմա՞լ էնենք։ Մեր ախչիկ պտի տանիմ կորցում, օր ուրիշ մարթիկ չխասկնան, ըսին. «Թագավորի ախչիկ ծռեր ա»։

Գելի ուր ախչկան լավ մե ձեռք շոր կէնա ու խաց ու զատ, կառի ուր ախչիկ, ու կէրթա։ Շատ ու քիչ աստված դինա, կէրթա սարի մի գլոխ։

Աստու խրամանքով էդ դզեզ ախչկա պնչից գելի, կասա.

— Ափո՛, մե քիչ ըստեխ խանգստանանք, նստինք ըռահաթինք։

Թագավորն ա, կնստի, ու ախչկա գլոխ կգնա վըր ուր չոքին, ախչիկ կքնի։ Թագավոր գողտուկ ախչիկ կթողա քնուկ, գելի ու կէրթա։

Ախչիկն ա, մե վախտ կքնի ու դիմնա, գելի կիշկա ուր շորս բոլոր, կտեսի օր մարթ մադաթ չկա, ինք սարի մի գլոխ, գիլա ու կողբա էդ տեխ. «Ես,— կասա,— թագավորի ախչիկ էղիմ, էսօր էսա տեխ անտեր ու անտիրական ի՞մալ էնեմ»։ Շատ էդտեխ կզվռնա, կէրթա մի խովրվու ռաստ կիգա, կասա.

— Խովիվ ախպեր, քու շորեր կիտա՞ս ընձի, ես իմ շորեր իտամ քե։

Խովիվ կասա.— Հ՚որի՞ կծիծղաս իմ վրեն։

Կասա.— Չէ, աստված վկա, ես իմ սրտեն կըսիմ։

Ախչիկ կխանա ուր շորեր, կիտա խովրվուն, խովվի շորեր կառի ուրին։ Կլավանգի (կխնդրի) խովվուն, օր զինք ուր խետ տանի, ուր աղին էնա ղազարած։ Խովիվն ա, զախչիկ կառի, իրկուն կտանի ուր թագավորին։ Կէրթա թագավորին կասա.

— Թագավոր ապրած, սարեն մի մարթմ եմ բռներ եմ, ինս ա, չինս ա, չըմ գինա։ Կլավանգի կասա. «Ընձի թըղ էնեն ուրանց ղազարած»։

Կտանին, կէնին ղազարած։ Մե ութ օր կթըմըմի, էդ ախչիկ կիգա կլավանգի թագավորի կնկա ջառիին, կասա.

— Մե պուտուկ տաք, ջուր տաքցում, իմ գլոխ լվամ, շատ օշլոտեր ա։

Կբերին մե պուտուկ կիտան էդ ախչկան, ջուր կտաքցու, ուր գլոխ կլվա։

Մե վախտ կմնա, էն մեկ օր էտոր դլխու վլանալու վախտ թագավորի ջառիեն կէրթա կպախտվի էդ ղազերու քոխի մեկ կուշտ։ Կտեսի օր էդ Քյաչլիկն ա կտկլոզնա ու կլողկնա։ Հանդե մեկ խուռնիկ-խրեղեն ախչիկմ, օր էդրան խինդ խատ մատնիք օր ակներ ազրութ ու զմրութ ա դիփ, էդ թագավորի ջառիեն մեկ կգողնա։

Ախչիկ գելի ջրու միջեն, Քյաչլիկի շորեր կխագի, մատընքներ կէցկա ուր մատներ, կտեսի օր մեկ չկա։ Էդտեխ գիլա ու կողբա կըսա. «Ես թագավորի ախչիկն ի, մեկ հատիկ ազիզն ի, օր ու արև չելի, էսօր ես էկա էսա տեխ էղա ղազարած ու մատնիք կորավ»։ Շատ գիլա, դառնա ինք ուրին կասա՝ «Ես իմ խոր դովլըթից ինչ էրի, մնաց մեկ խատ մատնիք»։ Կխագի ուր շորեր ու կքելե։

Թագավորի ջառիեն ա, կառի զմատնիք կվազի, կիտա թագավորի տղին, կասա.

— Քու դլխուն ու արևուն մեռնիմ, թագավորի տղա, մեր ղազարած խո քյաչլիկ չէ, մե խուռնիկ-խրեղեն ախչիկ ա, օր քու լայեղն ա։

Կրսա.— Օղո՞րդ կրսիս։

Կրսա.— Աստված հախ ա, թե չավտրնաս, էտա լէ ընդրա մատնիքն ա, գողցեր եմ, բերեր եմ։— Մատնիք կիտա թագավորի տղին։

Կասա.— Ջառիա, ես ի՞մալ ղէտի տեսիմ։

Կասա.— Ութն օր օր թըմրմավ, էնտրա գլխու վլանելու վախտըն ա։

Ութ օր կթըմրմի, ախչիկ կիդա էլի պուտուկ կուղա։ Կառի կէրթա զուր գլոխ կվլա։ Ջառիեն կիգա, թագավորի տղին կասա, թագավորի տղեն կէրթա կպախտվի ղազերու քոխ։ Տեսի օր ախչիկ էնտեխ տկլոզցավ, մտավ մըջ ջրուն, օր հանդե մեկ խուռնիկ-խրեղեն ախչիկ։ Գելի օր ուր քյաչլկի շորեր խազի ախչիկ, թագավորի տղեն կխասի, կփաթվի հ՝ինե.— Քու գլխուն, արևուն մեռնիմ, դու ընձի ու ես քըզիկ։

Կասա.— Ջանըմ, հա՛յ հավար, հա՛յ մադաթ, ես քյաչլիկմ եմ, նախրորդի ախչիկմ եմ, էդպես բան չէղի, դու թագավորի տղա, քու խեր կլսա՝ ընձի լէ կսպանա, քըզի լէ կսպանա։

Կեսա.— Չէ՛, ինչ օր էղիս, դու իմն ես, ես քուկդ։

Էդտեխ կառի զքյաչլիկ, կտանի ձեռքմ թագավորական շոր կխագու, ու կտանի կդնի մեկ ջոկ հ՝օդա։

Վախտ մի կմնա, էդրան մե տղա կէղնի, խուռնիկ-խրեղեն։ Բաց թագավորի տղեն ուր խոր մոտեն գողտուկ ուր մոր կասա թե.

— Ես առեր եմ մեր ղազարած, հ՝ինք մեկ խուռնիկ-խրեղեն ախչիկ ա, էնտրան լավ խաց ու զատ կիտաք։

Ինչ զատ կիտան թագավորի տղին, էն զատ լէ կիտան ուր կնկան։

Կմնա, էրկու տարի մեջ կընցնի, մե տղեմ էլ կէղի։ Կէղի էրկու։ Տղեքներ կխասնին, կէղին իննը, տասը տարեկան։

Էդ կնիկն ա, մեկ օր կնստի ու գիլա. իրիկ կիգա, կտեսի, կասա.

— Դու հ՝որի՞ կիլաս։

Կասա.— Ջիլամ ի՞նչ էնիմ։ Ես ֆլան թագավորի ախչիկն ի, աշխարքի հարստութենի տերն ինք, ու իմ խոր մեկ խատ ազիզն ի, էսքան վախտ ոնչ իմ խերն եմ տեսե, ոնչ իմ մեր։

Թագավորի տղեն ա կասա.— Օր էդպես ա, ես քըզի կճամփիմ, կէրթաս քու խերն ու մեր կտեսիս։

Գելի էրկու խատ ոզիր կդնա խետ, ու թամբեխ կէնա, կասա.

— Կառեք, կէրթաք թասլիմ կէնեք ուր խոր ու մոր։

Կառին, կէրթան։ Չուր իրիկուն կէրթան, ու իրիկուն չադր կզարկին, ու կմտին տակ։ Վազիր կվերցու կասա էդ կնկան, թե.

— Արի՛, ձեռ տուր մըզիկ։

Կնիկ լէ կասա.— Հա՛յ հավար, հա՛յ մադաթ, չէ՞, իմ էրիկ ընձի թասլիմ էրե ձըզի, ձըզի թասլիմ էրե աստված, օր դու ընձի սըլամաթ տանիք հանցնեք իմ խոր ու մոր։

Կասա.— Չէ՛, չէղի, պտի ձեռ տաս մըզիկ, չէ՛, քու տղեն կխորինք խողի տակ։

Կասա.— Խորեք, չխորեք, էդպես բան չէղի։

Գելին ու զտղեն կխորին։ Գելին լուսուն զչադր կքանդին ու կէրթան։ Կէրթան չուր իրիկուն, մեկ լէ չադր կզարկին ու կմտին չադրի տակ, էլի բալեն կիտան էդ կնիկ, իլլահի պտի ձեռ տաս մըզի, թե չէ՝ քու մեկել տղեն լէ կխորիմ։

— Խորես, չխորես, էդմալ բան չէղի։

Կտանին, զտղեն կխորեն։

Կմնա չուր լուսնա։ Գելին ու ուրանց չադր կքանդեն, կէրթան։ Չուր իրիկուն կէրթան, մեկ լէ չադր կզարկին ու կմտին տակ։ Էլի բալեն կիտան կնիկ։

Կնիկն ա կասա.— Դու էղիք ձեր աստված, էդպես ա, մացեք ելիմ դուս, մե քիչ աղոթք էնիմ ու իդամ։

Կնիկն ա դելի դուս, մե քիչ կհեռենա չադրից ու կկանի զաստված կկանչա. «Է՛, մեռնիմ քե, աստված, դու ինչ փորձանքի մեջ ընձի էցկիր, իմ էրկու տղեն լէ դուրս տվեցի, մկա լէ դուզին իմ նամուս վեր բերին։ Դու ընձի ազատես էս զալումներու ձեռնեն»։ Ասելու խետ փուլ (սարի լանջ) կճեղքի ու կնիկ մեջ կէրթա։ Կմնա չուր լուսուն, վազիրներ կդառնան ուրանց թագավորի կուշտ։

Էն մեկ մեկելին կասա.— Մենք էրթանք թագավորի տղի կուշտ ի՞նչ ջուաբ տանք։

Էն մեկել կասա.— Քելա, ես ջուաբ կիտամ։

Կէրթան ուրանց տեխ, թագավորի տղեն կասա.

— Սըլամաթ թասլըմ էրի՞ք ուր խեր։

Կասա.— Քու խեր չկտրի ու քու կնկան. ո՞ն գինա, ինս էր, ջինս էր քուվի (սարի գաղան) էր. գացինք, օր խասանք ուր էրկիր, իրկուն էր, ըսեց թե՝ «Փչուր մի մացեք, ես գելիմ դուրս ու գիդամ»։ Ելավ դուրս, էլ չգիտցանք. էլ չէկավ, էրեխեք կերա՞վ, խեղդե՞ց, չգիտցանք։ Մացինք չուր լուսուն, մենք լէ դառձանք, էկանք։

Ախչիկն ա կմնա խողի տակ չուր լուսուն։ Լուսուն ա, խովիվ օխչար կառի կիգա էդտեխ։ Խովվու շներ կիգան խինդ վեց խատ.

18—1086

կոռնան ու կխեղդին զիրար։ Խովիվ կասա. «Ջանըմ, ես հ՚ըմնօր կիդի էսա տեխ, իմ շներ էսա թավուր չէնին, էսօր հ՚որի՞ էս թավուր կէնին։ Վալահ ըտեխ բան մի կա, ես պտի էրթամ իշկեմ»։

Խովիվ կիգա, կիշկա օր էրկու իրեք կտոր շոր կա էդտեխ, կփորա զփուլ, կտեսի օր ախչիկ մի խողի տկեն դուս գելի, չուտիս, չխմիս, հ՚ինե, իշկես։

Էդ տեխ ախչիկ կասա.— Խովի՛վ, դու ի՞նչ տեղաց խովիվն իս։

Կասա.— Ես Ֆլան թագավորի խովիվն իմ։

Ախչիկ դիմնա օր ուր խոր խովիվն ա, կուրախնա, կասա.

— Խովի՛վ, էդ իմ շորեր, իտա ճանկ օսկին կիտամ քըզիկ, շորեր տու ընձիկ։

Խովվու շորեր կառի, ուր շորեր կիտա խովվուն ու կըլավանգի խովվու մոտեն, թե ինձի տար քու խետ, էղիմ քու աղին ղազարած։

Խովիվ կառի ու կէրթա, կտանի կէնա ղաղարած։

Դառնանք թագավորի տղի վրեն ու ուր վազիրներու։

Թագավորի տղեն կասա վազիրներուն.— Իմա՞լ էրիք ղկնիկ։

Կասին.— Ի՞նչ գինանք, կնիկ ինս էր, ջինս էր, հ՚իրկուն առավ ուր ճժեր ու կորավ։

— Դե,— կասա,— էտմալ ա, ընկեք իմ հ՚առեճ, էրթանք չադրներու տեխ տվեք նշանց։

Վազիրներ գընկին թագավորի տղի հ՚առեճ, հ՚առճի գրվան չադրի տեխ նշանց կիտան։ Թագավորի տղեն ա էդտեխ կզվռնա, ուր տղի ջանտակ կգտի։ Կփորա, խողի տակեն կխանա, ասսու խրամանքով տղեն սաղ սըլամաթ խողի տկեն գելի։

Գիգա մեկել չադրի տեխ, էնդեխ էլ կը զվռնա, մեկել տղեն լէ կգտի։ Մեկել տղեն լէ ասսու խրամանքով սաղ սըլամաթ խողի տկեն կխանա։

Կառի ուր էրկու տղեն, ուր էրկու վազիր կէրթա ուր աներոջ քաղաք։ Կէրթա ուր աներոջ տուն, կբաջլայա ուր գլխու գալած խսա կէնա ուր աներոջ։ Քյաչլիկ էնտեխ հանկաջ կէնա։ Բաց Քյաչլիկ կճանչնա օր էտա ուր իրիկն ա, ուր էրկու տղեն ա, էտա լէ վազիրներն են։

Էն դեհեն կասա.— Կլավանգիմ, իզին տաք էրկու խոսք լէ ես խոսամ։

Ուր խեր կասա.— Իզին է, ինչի՞ իզին չէ։

Էն լէ կիգա, ուր գլխու գալած խսա կէնա, կասա.

— Դու իմ խերն ես, էդա լէ իմ իրիկն ա, էդա լէ իմ տղեք-

ներն ա, էդա լէ էն էրկու վազիրներն ա օր իմ տղեքներ խեղդին։ Դատ ու դատաստան կէցկիմ ձեր վիզ։

Խեր էդտեխ կթռի, ախչկա ճակատ կպաքա։ Իրիկ կբերա զուր էրկու վազիր կսպանա։ Յոթն օր, յոթ գիշեր թաժատան դհոլ ու գուսանք կդարկին, ուր ախչիկն ու փեսեն կպսակա, կճամփա ուր տուն։ Էն խասավ ուր մուրազին, դու լէ խասնիս քու մուրազին։

Էրկնուց իրեք խնձոր իջավ, մեկ ըսողին, մեկ լսողին, մեկ լէ՝ փայ ընողին։